



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԿԱՆԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

17.02.2020 թիվ 02

Հեռ. 093326024

Էլ. փոստ: kanch.aragatsotn@mta.gov.am


ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

ԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեզ ենք ներկայացնում Կանչ համայնքի ավագանու N 6 որոշումը 14.02.2020թ. -ի:
Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար  Ս. Բշարյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱՏՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՆՉ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

kanch.aragatsotn@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ Ն 6

«14» փետրվար 2020 թվական

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԱՄԱԿԱՆ
ԱՃՈՒՐԴՈՎ ԿԱՏԱՌԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով ՌՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Կանչ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 3.6573 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-034-0109-0127) գյուղատնտեսական հողեր նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտավայր հողատեսքը օտարել դասական աճուրդով: Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5 (հինգ) տոկոսի չափով (12500 /տասներկու հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ), իսկ քայլի /հավելածի/ չափը սահմանել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

2. ՀՀ Արագածոտնի մարզի Կանչ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 2.8427 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-017-0010-0004) արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը օտարել դասական աճուրդով: Աճուրդի մեկնարկային գինը սահմանել 2750000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5 (հինգ) տոկոսի չափով (137500 /մեկ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ), իսկ քայլի /հավելածի/ չափը սահմանել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործողություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավագանիներ՝

Կողմ՝ 5,

Դեմ՝ 0,

Ձեռնպահ՝ 0

1. Ալոյան Ուսուր
2. Թամրյան Թամր
3. Թամրյան Ջասմ
4. Հաջոյան Ֆերիկ
5. Մխիթարյան Հարություն

[Handwritten signatures]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Ս. ԲԱՐՅԱՆ



Մ. ԲՇԱՐՅԱՆ